

բանութեամբ, «Միջակ» պատմութեամբ եւ Աւարտարանութեամբ, ինչպէս յօրինուած էր Մովսէս Խորենացւոյ Հայոց Պատմութիւնը: Թէ ամբողջի վրայ մէկ ձեռք դործած է, բաւական է նկատի առնել Գ. 23 գլուխը, ուր կը գրէ Խմբագիրը. «Չանուանաւ արքայիցն վերագոյն գրեցաք ի Քաջէն Վաչականայ մինչեւ ցճարեպաշտն Վաչական՝ տասն թագաւորք»: Այս գլուխին մէջ նկատի առնուած են Ա. 15 եւ Բ. 17 գլուխները: Այս իրողութեամբ երբ խմբագրին ժամանակը ստուգելու ուզենք, մեր ուշադրութիւնը պիտի դարձնենք երեք գիրքերու պատմական բովանդակութեան եւ անոր ժամանակագրական վերջին եզրին: Արդ Գ. գիրքի 23 գլուխը կ'աւարտի քաղաքական պատմութեամբ, յիշելով Յովհաննէս Սենեքերիմի թագաւոր պսակուելը, որ տեղի ունեցած է 1004/5ին: Յաջորդ գլուխը նուիրուած է Աղուանից կաթողիկոսներու յաջորդութեանց, վերջին կաթողիկոսն է Մովսէս, 1002—1008, Յովհ. Սենեքերիմի կենդանութեան:

Թէպէտ Անանիա Մովսէսի 950ին ունէր իր ձեռքին տակ Աղուանից Պատմութիւնը, բայց, ինչպէս վերագոյն առիթ եղաւ ըսելու, չենք կրնար հաստատել թէ այն նոյն ծաւառն ունէր, ինչ որ հասած է մեզի: Կէտ մը, Աղուանից եկեղեցւոյ միւսանգամ վերածանալու մը Հայոց կաթողիկոսի նախապատուութիւնը, զոր ներկայ խմբագրութիւնը (Ուխտանէսի հետ) Արրահամ կաթողիկոսի օրով տեղի ունեցած կը համարի, Անանիա գայն Կոմիտաս կաթողիկոսի օրով գիտէ: Ուսկից կրնանք հետեւեցնել թէ Անանիա որեւէ բնագիր մ'ունէր իր առջեւ:

Բայց Ուխտանէս ինչպէս կ'երեւայ, կը ճանչնար ներկայ խմբագրութիւնը. սա ծննդեամբ հաւանօրէն Աղուանից աշխարհէն էր, գտնուած է իր հասուն տարիքի մէջ ալ այդ աշխարհը. տեղեակ էր անոր քաղաքներու եւ գիւղերու եւ ժողովուրդներու: Իր Պատմութեան մէջ, Ա. 68 կը գրէ. Տրդատ «իջեալ ի գաշտն Գարգարացւոց ի սահմանս Աղուանից, յորում եւ [գ]միջակտուր գիսագացն (տպ. Բաղայն) արար թագաւորն [Մ. Խոր. Բ. 85]. զոր այժմ ոչ երբեք կոչի աշխարհն Բասղաց (տպ. Բաղայն), զոր կարծեմ փոխել անուանն. ո՛չ յիշի որպէս ձորացն ի Գարբանա. բայց է բլուր մի յաշխարհին Ուխտացւոց՝ մերձ առ ստորոտով լեռինն՝ որ կոչի Արաթիւն, որ դեռ եւս կոչի

բլուրն այն Բարսղաբերդ» (էջ 96): Այսպէս նաեւ Բ. 64. «Մայր եկեղեցեացն (Աղուանից) Գիսու եկեղեցին այն առ ստորոտով Ամարասու, ի գաւառին որ կոչի Գորոգու, մերձ ի գաշտն Պարտաւ քաղաքի, որ կոչի Փայտակարան» (էջ 121): Ինչպէս հաւանական է, նաեւ Ծաթերու մկրտութիւնը, որուն պատմութիւնը գրած էր Գ. գրքի մէջ (այժմ անհետացած), կատարուած է յոյն որթողութեան Աղուանից աշխարհի սահմանի վրայ: Այս տեղիքները ցոյց կու տան, թէ Ուխտանէս թէ համակիր է Աղուանից եւ թէ ծանօթ անոնց Պատմութեան: Ան մինչ իր Պատմութեան Ա. գրքին մէջ, զոր գրած է Հոյաստանի սահմանին մէջ, բոլորովին անծանօթ կ'երեւայ «Աղուանից Պատմութեան», Բ. գրքին մէջ ընդարձակ յառաջընթացութիւններ կ'ընէ: Կրնանք սակէ հետեւեցնել թէ շատ ուշ ձեռք անցուցած է զայն: Ե՞րբ: Գիտար է ըսել. գիտենք միայն որ ան վախճանած ըլլալու է «ԺԱ. դարու սեամքին վրայ» (տես իմ Կիւրիոն կաթողիկոս, Վիեննա 1910, էջ 56), թերեւս իր հայրենի աշխարհին մէջ, ուստի կարող էր տեսած ըլլալ Աղուանից Պատմութիւնը իր նոր խմբագրութեան մէջ:

Խմբագիրը իր ազդեցութեամբ թուին մէջ ունէր նաեւ Մովսէս Խորենացւոյ Պատմութիւնը, որմէ օգտուած է հին պատմութեան համար մինչեւ Ե. դարու կէսը: Հ. Վ. Հացուրի այս իրողութիւնը շահագործել փորձեց, ապացուցանելու համար թէ Մ. Խորենացի Ե. դարու պատմագիր է, այն համոզմամբ թէ Մ. Կաղանկատուացին ալ է. դարու հեղինակ է: Այս կրկին սխալներու մէջ պիտի չի յնար ան, եթէ կանկալ եւրացուցած ըլլար քննադատներու այն վճիռը, թէ 850էն յառաջ գոյութիւն չունէր Մ. Խորենացւոյ Հայոց Պատմութիւնը, իսկ 1003էն յառաջ Մովսէս Գաղանկատուացւոյ (Կաղանկատուացւոյ) Աղուանից Պատմութիւնը: Չարմանալի չէ այնուհետեւ, թէ ինչո՞ւ Ստեփանոս Ասողանի անծանօթ մնացած է այս պատմագիրքին:

(Շարունակելի է) Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆ

ԱՐՅԱԽԻ ՎԵՆԵՐԸ

(Շարունակութիւն):

Թ.

ԶԱԽԷԻ, ԶՈՐԱԳԵՏԻ ԵՒ ԿԱՅԵՆՈՅ ՎԱՆՔԵՐԸ

Արցախի ԺԹ. գաւառը կ'իյնայ Կուր գետի, Չորագետի, Խրամի, Աղսու գետի, Պողոս Գիլիսայի եւ Կայենի լեռներու գաւաթնազծերու մէջ եւ ստացած է Զաւէ, Չորագետ, Երկիր Սեւորդեաց, Երկիր Կայենոյ եւ այժմ Ղազախի գաւառ անունները:

1. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Հին Ոսկեպարի արեւելեան կողմը՝ ձորակի մը եզերքին կառուցուած է այս վանքը: Տաճարը խաչաձեւ է եւ ներքուստ ու արտաքուստ սրբատաշ քարով շինուած: Ունի նորաշէն կաթողիկէ (Արձագանք, 1888, էջ 159):

2. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ

Հին Կիւնէնէն քիչ մը վեր, առուակի մը ձախ ափին՝ լեռնաբազուկի մը վրայ կանգնուած է Առաքելոց վանքը՝ չորս կամարներու յեցած: Տաճարը հոյակապ է՝ շինուած սրբատաշ քարերով: Ունի աւագ խորան մը, չորս լուսամուտ, երկու խորհրդարան, կաթողիկէ մը, դուռ մը եւ 10·25 մ. երկարութիւն ու 7·45 մ. լայնութիւն: Ունի նմանապէս գաւիթ մը, որուն դռնադուրի քարին վրայ կայ՝ «Ի թվին ՈՂԳ. կաման բարերարին Աստուծոյ եւ ողորմածութեամբ աթաբակ ամեր սպասալար Խուժու փուղին եւ Գրիգոր թոռն Խաչենիսեց ապաւինեցայ սուրբ Առաքելոյ իմ հալալ արդեամբ եւ բնակիչք սուրբ ուխտիս ետուն Բ. պատարագ ի տաւնի սուրբ Գրիգորի գիւտի նշխարացն...» (Արցախ, էջ 378, Արձագանք, 1888, էջ 158, ուր Խուժու փուղին՝ Խուժու-բուղին» եւ Խաչենիսեցը՝ «Խաչենի Սիւնեաց» կարգացուած է):

Գաւիթին հարաւային թաղասիւնին վրայ կայ «Յուսոփն Աստուծոյ միաբանեցայ ի սուրբ Առաքելաւ եւ միաբանքս ետուն Ա. Ժամ ի տաւնի Հովսիփեան, խափանիչք դատին»: Ասոր ներքեւը՝ «Կաման Աստուծոյ եւ Տարեմուտ որ եւ միաբանեցայ Առաքելոց

սուրբ ուխտիս իմ հալալ արդեամբք եւ միաբանքս ետուն Բ. պատարագ ի տաւնի սուրբ Գրիգորի...» (Արձագանք, 1888, էջ 158): Առաքելոց տաճարի հարաւային որմի տակ կայ նշանաւոր իաշարձան մը հետեւեալ արձանագրութեամբ՝

«Ես եմ լոյս աշխարհի... ապա ստորին մասին վրայ՝ Ով քառաթեւ սուրբ պանծալի, Փրկագործող մարդկան ազգի, Տեսիլ փառաց անձառելի, Գերապայծառ եւ սխրալի, Յորժամ փայլես ընդ ամ(պ)ս երկնի, Լեր բարեխաւս Տեառն Յիսուսի, Կարապետին քո աւգնողի, Արմկանին իւր կենակցի, Եւ գաւակացն դովելի, Համայն ազգացն, որ ի կամս Հաւր ննջեցին:

(Արցախ, էջ 379):

«Մենաստանս ունի ամբողջ նման ամուր պարիսպ»՝ շինուած լեռնաբազուկի դիրքով, որ ձգուած է գրեթէ հիւսիսից հարաւ եւ ունի հաստատուն եւ բարձր բուրգեր: «Պարսպի ներսում կան միաբանից խուցեր, պալատանման բնակարաններ, սենեակներ եւ դռներ» (Արցախ, էջ 379. հմմտ. այս վանքի մասին նաեւ Ջալալեան, Ճանապարհորդութիւն, Ա., 148—150. Էփրեկեան Հ. Ս., Բնաշխ. Բառարան, Ա., էջ 245):

3. ԳԱԳԱՅ Ս. ԽԱՉԻ ԵՒ Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔԸ

Համանուն բերդին — որ Կոթի գիւղի արեւելեան կողմը կ'իյնայ — վանքն է այս: Շինուած՝ սրբատաշ կաթնագոյն քարերով: Հիմնադիրը ճանչցուած է Ս. Մեսրոպ, իսկ վերանորոգողներէն եղած է Արգունիան Խաչատուրեան Տէր Սարգիսեանց: Մեծ մատուռին վրայ կայ արձանագրութիւն մը, որ անոր ուրիշ մէկ վերաշինութիւնը կը հաղորդէ, սակայն համեստ բարերարին անունը լուրւած է: Գաւիթն հիւսիսային պատին վրայ կը կարգացուի՝ «Կաման Աստուծոյ եւ Խաչենիսս Գրիգոր եւ Յակոբս կանգնեցաք զխաչս բարեխաւս մեզ եւ ծնաւազ մերոց... ի թուին 225»:

Հին վանք է, օժտուած Ս. Սարգսի մատուռով: Վարդան Արեւելցի կ'անուանէ՝ «հնչակաւոր» (Պատմութիւն, էջ 145. հմմտ.

դեռ Չամչեան, Պատմ. Հայոց, Ա., էջ 446-Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 157. Արձագանք, 1888, էջ 161. Արցախ, էջ 396. Պատմութիւն Աղուանից, Ա., էջ 184-194 եւ Բիւզանդիոն, 1900, Թ. 1019. նաեւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 442):

Սիրուած ուխտաւայր, մանաւանդ Չատկին եւ Սարգսի տօնին:

4. ԴԵՂՁՆՈՒՏԻ ԿՍՄ ԴԵՂՁԿՈՒՏԻ ՎԱՆՔԸ

«Առաքելոց վանքից երկու ժամ ճանապարհ հեռու շինուած է այս մենաստանը, բարձր անտառապատ լեռան լանջին՝ Մէլիք գիւղի այժմու ձմեռանոցի մէջը»: Մենաստան գեղեցիկ: «Տաճարն է քառակուսի... ներքուստ եւ արտաքուստ սրբատաշ քարով» (Արձագանք, 1888, էջ 159): Մակարայ վանքի մեծութիւնն ունի: «Տաճարս ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, մի դուռն արեւմտեան կողմից» (Արցախ, էջ 381): Օժտուած է դաւիթով մը, ուր կան թաղուածներ:

Այս վանքը Բարխուդարեան (Արցախ, էջ 380-381) Դեղձնուտի, իսկ Քաջիկեան՝ Դեղձկուտի վանք (Արձագանք, 1888, էջ 159) կ'անուանեն:

Սաշքարի մը վրայ հետեւեալ կարեւոր արձանագրութիւնը գրուած է՝ «Էին Աստուծոյ զօրութեամբ յաշխարհակալութեան եւ իշխանութեան Ամիր սպասալար Ալթարակա եւ (եւ) Առաքելս¹ նուաստս սպասաւոր բանին Աստուծոյ յերկրէն Կիլիկիոյ գաւառէն Տարսնի կամակցութեամբ եղբարցս շինեցաք գեղեցիկ ամենայն պատրաստութեամբ եւ դաւիթս, կանգնեցաք զսուրբ նշանս աստուածընկալ ի նեղ ժամանակի, դառն աշխատութեամբ բարեխաւս մեզ եւ ծնողաց մերոց եւ արեւշատութեան պարոնին եւ դաւակացն, որ սատար եղև ձեռնառութեան միւրթար կենաց մերոց յարեւելիսկոյոսութեան Հաղպատու տէր Յովհաննէսի, որ է հեղ... թվ. ՉիԴ» (Արձագանք, 1888, էջ 159): Էփրեկեան շ. Ս., Բնաշխ. Բառարան, Ա., էջ 602):

¹ Առաքել սիրուած եւ բարեկործ անձ եղած է: Չինքր Յովակիմեան Յովհ. Վանականի համանուն աւակերանի հետ կը նոյնացնէ (հմմտ. Յովակիմեան, Գարեգին արքեպ., Հաւուց թատի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հոյ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 62-63):

5. ԴՎԵՂԱՅ Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔԸ

Շինուած է Նոր-Պարան կամ Ապարան գիւղի մօտերն, անտառապատ եւ խոր ձորի մը լանջի հարթակի վրայ: «Մենաստանս շինուած է ամբողջապէս սրբատաշ քարով, բայց եկեղեցու ձեւով եւ ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, մի ատանձին խորան եւս հիւսիսային որմի մէջ, մի դուռն հարաւային կողմից, մի քանի լուսամուտ, մի գանգակատուն, որ բազմած է աւագ խորանի գլխին, 11 մետր 80 սանթիմ երկարութիւն, 7 մետր եւ 80 սանթիմ լայնութիւն: Հնաշէն են աւագ խորանն եւ հիւսիսային երկու խորաններն, իսկ նորոգուած են մնացեալ բոլոր մասերն» (Արցախ, էջ 383):

Հարաւային կամարին վրայ կայ՝ «Շինեցաւ յատակս սուրբ սեղանոյս արդեամբ Սաշատուր եւ Դարչո Հախվերտեանցի»: Իսկ զբան ճակատին վրայ՝ «Ողորմութեամբն Աստուծոյ շինեցաւ եկեղեցին յանուն սրբոյն Սարգսի արովք բարեպաշտից, ջանիւք եւ վերակացութեամբ Տիխիսեցի Եսայեան Նուրեհոյ... Շինարկեցաւ ի 1845 եւ աւարտեցաւ 1849 ամի Տեանն» (անդ, էջ 383): Էփրեկեան շ. Ս., Բնաշխ. Բառարան, Ա., էջ 609):

6. ԿԵՐԱՆՅ ՎԱՆՔԸ

Առաքելոց վանքի մօտ: Մաս մը՝ քարով եւ մաս մըն ալ՝ թրծուած աղիւսով շինուած: «Մենաստանս կառուցեալ է երկու սիւների եւ երկու կիսասիւների վերայ, խաչածէւ է ներքուստ, բայց եկեղեցու ձեւ ունի արտաքուստ» (Արցախ, էջ 379): Ունի աւագ խորան մը եւ երկու փոքր խորան, ութը նեղ եւ երկար լուսամուտ, գեղեցիկ կաթուղիկէ մը, 17-60 մ. երկարութիւն եւ 12-15 մ. լայնութիւն: Տաճարը ունեցած է քառակուսի շրջապարիսպ: Միարաններու սենեակները քանդուած են (Արձագանք, 1888, էջ 159 եւ Արցախ, էջ 379-380):

7. ՀԱՂԱՐՄՆԻ ՎԱՆՔԸ

Հաղարծնի² վանքի «շինութեան տեղը շատ գեղեցիկ է եւ բնութեան տեսարաններով հարուստ, թէև հեռու է Տաթևի արտասովոր գեղեցկութիւններից: Աղստե գե-

² Սրբաճամ Կրեապցի գայն կ'անուանէ Աղրծնու վանք, որ իր ճամբորդութեան ատեն կ'այցելէ (Պատմագրութիւն, էջ 26):

տի ձախ կողմից հոսող մի դետակ իր երկու սկսուածք ստուակներով մի տեսակ թերակղզի է կազմում Դագարի լեռնոտ բարձրունքներից դէպի հարաւ-արեւելք իջնող փեշերի վրայ, մի քառակուսի կիլոմետրաչափ աննշան հարթութեամբ: Այդ հարթութեան հիւսիսում մի լեռ է բարձրանում միանալով Փամբակու լեռնագոտիների հետ, իսկ հարաւից իջնում է մինչև Աղստե գետը...: Ահա այդ հարթութեան վրայ է շինուած Հաղարծնի պատմական վանքը» (Տաճար, էջ 73-հմմտ. եւ Արցախ, էջ 364): Դիլիջանէն երկու ժամ հեռու՝ դէպի հիւսիս (Աղբր. Հանդ. 1913, ԻԵ., էջ 61):

Հաղարծնի վանքը կազմուած է գանազան շինութիւններէ կամ շէնքերէ: Սկսինք եկեղեցիներէն:

Վանքին աւագ կամ գլխաւոր եկեղեցին Ս. Աստուածածին անունը³ կը կրէ: Ան «ներսից եւ դրսից մաքուր սրբատաշ կրաքարով շինուած է, ներսում չորս պիտոններ, որոնց վրայ բարձրանում է բարձր կլոր թմբուկով գմբէթը, գլխի սալերը թափուած: Թմբուկը որ յաճախակի պիլաստրներով է օղակուած, այդ պիլաստրների մէջ կան չորս լուսամուտ (Տաճար, էջ 75): Բարձր է եւ հոյակապ⁴ ունի աւագ խորան մը, երկու փոքր խորան, հինգ լուսամուտ, երկու խորհրդարան եւ 14-50 մ. երկարութիւն ու 11 մ. լայնութիւն:

Ս. Աստուածածնի տաճարին⁵ հարաւային որմին վրայ (ներքուստ) արձանագրուած է՝ «Շնորհիւն Աստուծոյ եւ Բէկի որդի Աշոտո յազգէ Մարբանդ եւ ամուսին իմ Բորինա եւ եղբայր իմ Սմբատ միարանեցաք սուրբ ուխտ(ի)ս եւ հայրն իմ եւ տվաք» (Տաճար, էջ 79): Սոյն պատին վրայ կը գտնուին դեռ ուրիշ արձանագրութիւններ, որոնք կը յայտնեն նուիրատուներու անուններն եւ անոնց վանքին ընծայածները եւ այն պարտականութիւնները, զորոնք միարանները փոխադարձաբար կը ստանձնեն (Տաճար, էջ 79):

Կարեւոր են այն երկու թուականները,

³ Հաղարծնի եկեղեցիներն երեք հատ են՝ Ս. Աստուածածին, Ս. Գրիգոր եւ Ս. Ստեփանոս: Երեքն ալ սրբատաշ եւ կոփածոյ քարերով շինուած (Արձագանք, 1890, Թ. 8, էջ 14):

⁴ Աղբր. Հանդ. 1913, էջ 65:

⁵ Վանքին արեւելեան ճակատի անկիւնաւոր բարձրութեան մէջ կան երկու վեղարուոր անձ, որոնք իրենց ձեռքին մէջ կը բռնեն եկեղեցոյն կաղապարը (Արցախ, էջ 365):

որոնցմէ մին Շի հարաւային դրանաղլիին է եւ անոր հակառակ կողմը կայ միւսը՝ ՉԷ: Հաւանականաբար՝ առաջինը եկեղեցոյն շինութեան տարին եւ երկրորդը անոր վերաշինութեան կամ բարեգործութեան թուականը կը ցուցնեն: Արդէն վերանորոգուած է քանի մը անգամ, այսպէս՝ կարեւոր նորոգութիւններ ըրած են 1681ին Թիֆլիզցի Թաղոյ որդիները եւ իրենց բարերարութիւնը արձանագրութեամբ մը յաջորդ սերունդի հաղորդած (Արցախ, էջ 365. Տաճար, էջ 79, ուր եւ դեռ ուրիշ արձանագրութիւններ յառաջ բերուած են):

Երկրորդ եկեղեցին է Ս. Գրիգոր, որ առաջինին հարաւային կողմը միեւնոյն ձեւով շինուած է, բայց կաթնաղցն չէ քարով եւ ունի մէկ մեծ եւ չորս փոքր խորան, ինը լուսամուտ, երկու խորհրդարան, կաթուղիկէ մը, 9 մետր երկարութիւն եւ 7-90 մ. լայնութիւն⁷: Անոր արեւմտեան պատին ճակատին վրայ եղած է շինութեան արձանագրութիւնը, որ եղծուած է եւ անընթեռնի դարձած, սակայն դաւիթին վրայ մնացած է հետեւեալ արձանագրութիւնը՝ «Կաման Աստուծոյ ամենակալին Աստուծոյ այս մեր զիր յիշատակի է եւ արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսի յազգէ Բագրատունեան Իւանի եւ Չաքարի, յորժամ նախանամութիւն Աստուծոյ եհաս յարարածս եւ ետ տիրել սեփական ժառանգութեան նախնեաց մերոց ետ ի ձեռս մեր յառաջ գանաղիկ դղեակն Հանրերդ եւ զթաղաւորանիստ քաղաքն Անի եւ ապա գամուրն Բջնիկ Մարանդիմիք եւ Գաւազանք, զԹաւրէթ, զԿարնոյ քաղաք մինչև ի Խլաթ՝ զՇաքի եւ զՇրուան, զՊարտա մինչև ի Բելուկան եւ զայլ բազումս իւրեանց սահմանաքն, զոր անկորդ համարեցաք յիշատակել: Այլ անրարկանային Աստուած սիրեաց զթաղ պարձանաց գլխո իմոյ զՉաքարիս կոչեաց առ ինքն յորո ձեռն եղև արիութիւնս եւ ես շինեցի ի մեր հայրենի վանքս Հաղարծնի ժամատուն վիմարդեան կամարակապ ի դրան սրբո Գրիգորիս եւ Ա. այդի յԵրեւան ետու վանն յիշատակի եղբար իմո եւ պարտին սպասաւորք սորա գաւազ խորանին պատարազն Չաքարէի մատուցանել անխափան, կատարիչք գրոյս

⁶ «Աղբր. Հանդէսի» մէջ Տէր Մովսէսեան «Չէ» նշանակած է (1913, ԻԵ., 63):

⁷ «Աստիճան ելից սեղանոյ սպր եկեղեցոյ է ի միջապայի բեմին ըստ Յունաց» (Ջալալեան, Ճամբ., Ա., էջ 129):

աւրհնեալ լիցին յԱստուծոյ» (Տահադ, էջ 77. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 183. Զալալեան, Ճամբ., Ա., էջ 131. Ազգր. Հանդ. 1913, ԻԵ., էջ 67—68. Արցախ, էջ 366):

Ժամատան (գաւիթին) դրան շրջանակին վրայ կայ՝ «Կամաւն Աստուծոյ եւ Գաւգու եւ Աշոտ միարանեցաք սուրբ Գրիգորիս եւ զմեր հոգոպահուստն յԱստուածածնիս շինութիս տաք եւ սկ վարդապետ եւ միարանք սահմանեցին պատարագ զամեն եկեղեցիքս ի տաւնի Երեմիաի մարգարեին, որչափ եւս կենդանի եմ» (Տահադ, էջ 80):

Գաւիթին մէջ կայ՝ «Ի թու ՈՄԵ (1206) ի յաշխարհակալ տէրութեան Զաքարեի եւ Իւանի եւ յառաջնորդութեան Տեառն Ստեփաննոսի եւ Սալթորդի Սմպատայ իմ գեղն Բանաքեո Սկանդարանց հողն գնեցի եւ ի Հաղարծինս ետու վասն իմ հոգոյս եւ վասն յերկարութեան կենաց Շահնշահի եւ Աւագի եւ միարանքս զձառագարդարին եւ զերկրորդ գալստեանն ժամն ինձ ետուն զամեն եկեղեցեացս...» (Տահադ, էջ 80. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 183 եւն):

Ս. Գրիգորի արեւմտեան պատին վրայ կայ՝

«Ի ՈՒԴ (1185) թուիս Հայոց ի թագաւորութեանն Ափ(խաղ)աց Գէորգեա ի հայրապետութեան Հայոց Տեառն Գրիգորիսի եւ Սալթատուր վարդապետ եւ Սուքիաս նորդեցաք զսուրբ Գրիգորս հրամանաւ թագաւորին եւ իւր մեծամեծ իշխանացն Սարգսի ամիրո... գին Անտոնի ճպ(ղ)ղ ունդլին Ելբէկին եւ թագաւորին գհին եւ գնոր կազմութիւն եւս ի սուրբ Գրիգոր... զայգին զմիջնաշինին ջրին գտն. Սաչկուպովանիցս ի միջի գիտու տեւան զԱրասաձոր զՏանձուտն եւ հրամայեաց թագաւորն զսուրբ Սաչի տանն աւուր յիշատակ կատարել...» (Տահադ, էջ 77. Արցախ, էջ 367, ունի տարբեր ընթերցում):

«Ես Գրիգոր միարանեցայ սուրբ Գրիգորիս իմ հայր արդեամբ եւ վարդապետ Յովհաննէս եւ միարանքս սահմանեցաք Ժպատարագ ի տաւնի նաւահատեաց խաչին Բ. Թումանին եւ զայն Գրիգորին»:

Ասոնցմէ զատ կան դեռ ուրիշ շատ մը արձանագրութիւններ — նուիրատուութիւններու եւ փոխադարձ պարտականութիւններու — այսպէս՝ Սարկաւագ, Քատուր, Արրահամ եւ իր տիկինը, Գրիգոր, Աթա-

նէս, Վարդ, Գերգ, Սարգիս, Յովհաննէս, Անտոն Դսեղեցի, Փառլ եւ Սիմա, Զուգոյ, Միսիթար, Յովհաննէս քահանայ, Յովհաննէս եւ Սարգիս, Ներսէս, Սարգիս եւ Գրիգոր եւ ուրիշներ կը միարանին կամ նուէրներ կ'ընեն եւ պատարագ կամ պատարագներ կը ստանան իրենց նախասիրած տօնական օրերուն:

Ս. Գրիգոր եկեղեցւոյն, յարակից մատուռն եւ գաւիթին մէջ կան շատ հանգուցեալներ: «Փոքրիկ մատուռների, որոնց չորսը տակաւին կրակահանգուն են, շուրջը կան բազմաթիւ գերեզմանաքարեր եւ խաչարձաններ, ուրեմն այդ բազմանդամ միարանութեան գերեզմանատունն էր» (Տահադ, էջ 78): Դժբախտաբար անոնց վրայ գրուած արձանագրութիւններն այլ եւս անընթեռնելի են եւ ասով վանքին պատմութենէն շատ բան՝ որ հաղորդուել ուզուած է՝ չէ հասած մեզի: Միայն խաչքարի մը արձանագրութիւնը մեծ մասովը դեռ կարելի է կարդալ. զայն Գրիգոր իր Ներսէս եղբորորդւոյն համար կանգնած է (անդ, էջ 79):

«Ս. Գրիգոր վանքիս հարաւային կողմին կից՝ շինուած է համակ սրբատաշ քարով թագաւորաց դամբանարան մատուռն, որ ունի երկու խորան: Հիւսիսային խորանին առաջ եղած տապանաքարի վրայ քանդակուած է՝ «Սմբատ թագաւոր»: Իսկ հարաւային կողմը կայ «Հանդիստ, Ա. թագաւորին Գաղկայ» (Արցախ, էջ 367. Զալալեան, Ճամբ., Ա., էջ 134): Սմբատեան ուրիշ գերեզմանաքարի մը վրայ կարդացած է՝ «Գէորդ թագաւոր» (Գեղարքունիք, էջ 185). Տէր Մովսէսեան ունի՝ «Այս է հանգստարան թագաւորաց Գաղայ եւ Գաւրայ» (Ազգր. Հանդ. 1913, էջ 72):

Կայ Ս. Ստեփանոսի նուիրուած մատուռ մըն ալ (փոքրիկ եկեղեցի մը), որ կանգնուած է Ս. Գրիգորի եւ ժամատան միջեւ. ունի չորս փոքր եւ մէկ աւագ խորան, երկու խորհրդարան, ինը լուսամուտ, մէկ կաթուղիկէ, մէկ դուռ եւ 6·88 մ. երկարութիւն ու 5·80 մ. լայնութիւն: Հոս հետեւեալ կարեւոր արձանագրութիւնը գրուած է՝ «Ի թու ՈՒԳ (1194, Բարխուդարեան, Արցախ, էջ 368՝ ունի ՈՂԳ) ի յիշխանութեան Իւանի եւ յառաջնորդութեան Սալթատուր վարդապետին եւ Սալթ Հարրա որդի շինեցի գեկեղեցիս վասն իմ հոգոյս. փրկութեան եւ ամեն միարանքս զՅայտնութեան ճրագալոյ-

ցին ժամն ինձ հրամայեցին եւ զՁատիկն Մլրքանա, որ անխափան առնեն կատարիչք զրոյս աւրհնեալ լինին» (Տահադ, էջ 76):

Հարաւային որմին վրայ գետեղուած արձանագրութեան մը համեմատ Ս. Ստեփանոս նորդութիւն կը տեսնէ՝ «Ի թուին Հայոց ՌՃ... աջ Շահ Սուլէմանին որդոյ փոքր Շահ Ապասին եւ տէ... Ս. Իշխանին եւ մէլիքութեան պարոն Շահնազարին եւ ի հայրապետ... Զուգայեցոյ եւ առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Յակովբայ կախկոպ... տէր Պետրոս աշակերտի նորին, ողորմութեամբ Աստուծոյ մէք յետինքս ի կրօնից Թիփլիզցի Հոգեջան, որդիքս Պարոս, Միսիթարս, Սափարս եւ Զալիս եւ որդիքն տէր Գասպարն, Հոգեջանն, Բաղդասարն եւ Մելքոնն, զմեր հողոյ արդեամբն նորոգեցաք զսուրբ Ստեփաննոս, որ յոյժ խախտեալ էր վասն փրկութեան հոգւոյ մերոց եւ երկարութեան կենաց որդոց մերոց եւ միարանք սորա հաստատեցին յայտնութեան եւ յարութեան պատարագն զմեզ յիշատակել եւ մէք խոստացաք զկանթեղ սորին միշտ ի վառ պահել որդէց որդի. կատարողքն օրհնին յԱստուծոյ ամէն» (Արցախ, էջ 368):

Հաղարծնի վանքին միարաններու սենեակներն աչքի զարնող բան մը չունին, սակայն սեղանատուներ Կիրակոս Գանձակեցիի վկայութեան համաձայն ստուգիւ «Երեւելի» է (Պատմ., էջ 116): Երկարութեան երկարութիւնն է՝ 28 մետր, լայնութիւնը՝ 10 մետր, կա(ու)րին ունի երկու հերթիկ եւ երկու երկար եւ բարակ լուսամուտներ հարաւի կողմից, իսկ հիւսիսային պատն դրսից ամենեւին չի երևում, որովհետեւ նա ծածկուած է տեղի զառիվայր թեքութեան մէջ...: Ենթադր ներսից հոյակապ տապաւորութիւն է թողնում, կամարները միմեանց հետ միացած են խաչաձեւող աղեղներով, յենած պատերի, երկու մեծ առանձնացած եւ տաս հատ պատերին կպած կիսասիւնների վրայ. կամարները միանում են երկու կենդրոնում, որոնց զլիւն տանիքի հերթիկներն են բացուած...» (Տահադ, էջ 78. Հմմտ. Արցախ, էջ 369 եւ Զալալեան, Ճամբ., Ա., էջ 129):

Սեղանատան արձանագրութիւնն է՝ «Ի թվ. ՈՂԵ (1248) յառաջնորդութեան Յովանիսի վարդապետի շինութեան աստուածաշէն տանս եւ ես կուտա... անունը սրբոցն ետու աւգնութիւն տրապիդիս զեկան վարդապետքս եւ միարանքս խոստացան... սր.

Բարաղ... ով խափանի իմ մեղացս տէր է» (Տահադ, էջ 78. Ազգր. Հանդ., ԻԵ., էջ 74):

Այս արձանագրութենէն Բարխուդարեան կարդացած է միայն՝ «Ի թվ. ՈՂԵ յառաջնորդութեան Յովհաննէսի վարդապետի շինեալ...» (Արցախ, էջ 369), մինչ «Արձագանք»ի յօդուածագիրն (1888, էջ 104) ընթերցած է՝ «Ի թվ. ՈՂԵ յառաջնորդութեան Յովհաննիսի վարդապետի շինութեան աստուածաշէն տանս եւ կուտա... անունը դարոցս ետու օգնութիւն տրապիդիս զեկան վարդապետս եւ միարանքս խոստացան ի տաւնի սուրբ Բարաղին... աւր. ով խափանէ իմ մեղացն տէր է»: Նոյն արձանագրութիւնն անկէ յառաջ Զալալեան կը կարդար (Ճամբ., Ա., էջ 136) «Յառաջնորդութեան Յաւիհաննէս վարդապետի եւ շինութեան աստուածաշէն տան եւ ես կուտայ... ետու ի տարապիգաս. միարանքն խոստացան ի տաւնի Բարաղի ինձ պատարագել»:

«Վանքից ոչ հեռու, արեւելակողմը կան երեք քայքայուած մատուռներ, որոնցից մէկի արեւելակողմն կանգուն փնացած խաչքարերից մէկի վերայ գրուած արձանագրութիւնից կարդացվում է միայն «ՈՂԵ. թվ. ես Գրիգոր...» միւսի արեւմտեան երեսի վրայ գրուած է «թվ. ՈՂԵ յառաջնորդութեան Դանիէլի եւ Հաչարաշ եւ իմ եղբեր Սապատ կանգնեցաք զխաչս ի հանգստարանիս ար ի հոգոյ փրկութիւն. յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր եւ զհոգեւոր եղբայրն մեր զԳրիգոր...» (Արձագանք, 1888, էջ 104):

Հաղարծնի վանքի անուանակոչութեան մասին կը հաղորդուի՝ «Յիշատակեալ գուգակիր գերեզմանի ճակատին սրբատաշ պատուանդանի վերայ բազմեցրած կայ մի քար, որի վերայ փորագրուած են երկու վեղարաւոր կրօնաւորներ փիլոնները ծածկած. նոցա մէջ տեղ նոյնպէս փորագրուած է տաճարի պատկերն, որի սրածայր կաթուղիկէ վերայ սաւառնել իջել է արծուին եւ փարում է խաչին, վարդապետները ձեռքերը մեկնած դէպ ի վեր ցոյց են տալիս արծուին: Աւանդութիւնը պատմում է որ տաճարի օծման հանդէսին այդ երկու սրբակեաց կրօնաւորները նկատում են Հոգին սուրբ արծուակերպ իջած կաթուղիկէ վերայ եւ սկսում են ուրիշներին եւս մատնացոյց անել, արծուի սաւառնելու եւ թոխիքի պտոյտները, անուանել են խաղ արծուի, որից եւ մենաստանը կոչուել է Սաղարծին կամ Հաղարծին...», սակայն ուղիղը

պիտի լինի Հողարժին, ինչպէս անուանում են Կիրակոս, Չամչեան⁸ եւ ուրիշներ» (Արձագանք, 1888, էջ 102, 1890, Թ. 8, էջ 14, ուր եւ վանքին պատկերը՝ էջ 1 եւ Ջարալեան, Ճամբ., էջ 130):

Հողարժին կամ Աղարժին, նաեւ Խաղարժին կամ Հաւարժին վանքի մասին տեղեկութիւններ ունինք ժ.Բ. եւ ժ.Գ. դարերէն: «Քանի որ պատմական աւելի հին տուեալներ չկան, ենթադրաբար պէտք է ընդունել որ Հողարժին ներկայ տեղում, ինչպէս Տաթևում եւ այլ հոչակուած տեղերում, կար մի հին վանք, իր միաբանութիւնով, իսկ յետոյ երբ Ջաքարեաններն ուժեղացան եւ այդ տեղ ընտրեցին իրենց ընտանեկան դամբարանի տեղ, կալուածները նուիրաբերութեամբ հարստացրին...: Այդ շրջանում ահա շինեցին Հողարժին այժմ դոյութիւն ունեցող կաթողիկէի զեղեցիկ եկեղեցին հաւանական արձանագրական ՇԻ (= 1071) թուին: Շինութեան ճարտարապետական ոճն այդ բանն է հաստատում» (Տահադ, էջ 74):

Ամէն պարագային Հողարժին արդէն հրոչակաւոր էր եւ աչքի զարնող հաստատութիւն, երբ Ջաքարէ եւ Իւանէ զայն Ստեփանոս եպիսկոպոսին կը յանձնէին՝ «Յտուն ի Կայէն տեղի հանգստեան նմա զգերահոչակ ուխտն Հողարժին եւ գիւղն զԱսաձորն» (Օրբէլեան, Պատմ. Սիւ., Գլ. ԿԳ): Բայց նոյն վանքը «ամայի եւ խամրացեալ» էր, երբ Խաչատուր Տարօնեցի վարդապետը հոն կը հաստատուի եւ առաջնորդութեան ղեկը իր ձեռքին մէջ կ'առնու: Նա «այր սուրբ եւ առաքինի եւ գիտութեամբ հոչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստի» կը ձեռնարկէ վանքին վերածնունդին եւ «պայծառացոյց զսուրբ ուխտն» (Կիր., Պատմ., էջ 108): Իր գործերուն մեկնասա ու քաջալերող կուտնենայ Գորգի թագաւորը եւ օգնական՝ Սուքիաս վարդապետը (հմմտ. Կիր., Պատմ. Հայոց, էջ 108—109 եւ արձանագրութիւնները):

Կիրակոս Գանձակեցին կը գրէ՝ «Եւ յեթն հարիւր եւ երեք թուին Խաչատուր վարդապետն եւ եղբայրն իւր Բարսեղ շինեցին եկեղեցի մի երեքխորանի հանդէպ վանիցն զմբէթաւոր յանուն սրբոյն Գէորգեայ» (Պատմ., էջ 116): Հ. Ինճիճեան սրամտօ-

րէն ուշադիր կ'ընէ՝ որ Կիրակոս լուծ է չինութեան վայրը եւ իրեն համաձայն «առաւել թուի լինել Հողարժինն քան թէ Գետիկ» (Ստորագրութիւն, էջ 313): Սակայն արձանագրութիւն մը եւ Ս. Գէորգի դոյութիւնը՝ Գետիկի մօտ, կու գան աւելի հաստատելու որ այս խօսքեր Գետիկի մասին են (հմմտ. անդ), մանաւանդ երբ նկատի առնուի որ այդ ատեն Խաչատուր Տարօնեցին մեռած էր եւ խօսքը ուրիշ Խաչատուրի նկատմամբ է:

Հողարժին վանքի — որուն համայնքը Կոստանդին Ա. կաթողիկոսի կանոնական սահմանները կ'ընդունի (Կիր., Պատմ., էջ 174) — երկրորդ ծանօթ անուանի առաջնորդն է Յովհաննէս Արմանեցին. որ «չինեաց ի Հողարժինն սեղանատուն երեւելի սրբատաշ վիմօք» (հմմտ. վերը):

Գրիգոր քահանայի հրամանովը 1284ին Աստուածատուր քահանան «ի վանս Հաւարժին կոչեցեալ» Աւետարանի մը մասերը կը գրէ (Թորոս Աղբար, Բ., էջ 339. հմմտ. Սիւրմէեան Ա. արքեպ., Յուց. հայ. Ձեռ. Երուսաղէմի, Ա., էջ 359):

Կարծեմ կարելի է անվարան Յաղբձին նոյնացնել Հողարժինի հետ, ուր Մաշտոց մը կը կազմուի՝ «Եւ մեղապարտ Սարգիս սարգաւարկս, որ կազմեցի Մաշտոցս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ի հայրապետութեան տէր Մխիթար եպիսկոպոս հոգեւոր հօրն իմ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որ կոչի Յաղբձին ի թղ. Հայոց ՊԶԼ ի Մարտամայնն» (Ակիմեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 1028):

Գարեբ վերջ Հաղբատի Ջաքարիս առաջնորդը Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի օրով կը ջանայ Հողարժինի (Աղարժնոյ) վրայ իր իշխանութիւնը տարածել (Դիւան, Գ., էջ 137—138), բայց յաջողութիւն չ'ունենար (անդ, էջ 628): Սիմէոն զինքը միմիայն Հողարժինի նուիրակ կը նշանակէ եւ Ղազարի կէսը Հաղբատցիներուն եւ կէսը Հողարժինի մէջ կը բաժնէ (անդ, Գ., էջ 628 եւ Ձ., էջ 182—183): Սակայն ասով խնդիրը առժամայէն կը կարգադրուի: Քիչ յետոյ Հաղբատացիները Հողարժինի բաժինին կը տիրանան եւ վերջինիս առաջնորդը Մանուէլ, զոր Սիմէոն պաշտօնանկ ընելու տրամադրութիւն ալ ունեցած է, Սարգիս միաբանին հետ անոնց դէմ Ղուկաս կաթ. Կարնեցիին խիստ բողոքադիր մը կը ներկայացնեն (Դիւան, Գ., էջ 628 եւ Դ., էջ 387—389):

⁸ Իրականին Հ. Չամչեանին (Պատմ. Հայոց, Գ., էջ 160 ցանկ), թէ Հողարժին եւ թէ Խաղարժին ծանօթ է, իսկ Կիրակոսի պատմութեան վերնախմբին հրատարակութեան մէջ (էջ 108) կայ՝ Հողարժին:

Տարիներ ետքը Հողարժինի միաբանները Դաւիթ կաթողիկոսէն կը խնդրեն իրենց վանքը «տէրունի» ընել եւ Սիմէոն վարդապետը վէճելի նշանակել: Կաթողիկոսը կը հաւանի (Դիւան, Ձ., էջ 33—36, 182—183):

Հողարժին Աղա-Մահմատ խանի օրէն մինչեւ 1862 զբեթէ լքուած եւ անրնակ կը մնայ: Այդ շրջաններուն Տէր Մարգարեան Պօղոս վարդապետը († 1895) կը ջանայ զայն չ'նջնել (Արձագանք, 1887, էջ 483. Արաքս, 1895, էջ 63—65. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 182. Մշակ, 1911, Թ. 258, ուր եւ Ստ. Վ. Քօլեանց վանահօր մասին): Ան 1901ին կը վերանորոգուի (Իւլիանովի, 1901, Թ. 1363):

Հողարժինի վանքը ունէր բաւական կալուածք եւ ջաղացք (Կիր., Պատմ., էջ 109. Արձագանք, 1887, էջ 483. Արաքս, 1897, Բ., էջ 43—44), բայց զժրախտաբար անխնամ ձգուած է (Մշակ, 1911, Թ. 258—259): Ստացած է Չոլիմոս քահանայէն շատ մեծ կաթսայ մը (Արցախ, էջ 369. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 182 եւն):

Տ. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆԵՔ

Հին-Հաչա-Ջրի հարաւային կողմը զեղեցիկ եւ բարձրահայեաց սարահարթի մը վրայ բարձրացած է Մակարայ վանքը⁹:

Ս. Աստուածածնի նուիրուած տաճարը շինուած է կիսատաշ քարերով եւ խաչաձեւ: Ունի աւագ խորան մը եւ չորս փոքր խորան, վեց լուսամուտ, մէկ դուռ եւ արեւմտեան պատին կից դաւիթ մը, որ կառուցուած է չորս սիւնի եւ տասը կիսասիւններու վրայ: Երբեմն անոր մէջ տեղը ուրիշ դաւիթ մը եղած է, որ սակայն այժմ խոնարհած է: Կանգնուած է չորս կամարներու վրայ: Միապաղպ կն եւ բոլորչի տաշուած սիւները եւ կիսասիւնները, որոնք զեղեցիկ պատուանդաններ եւ խոյակներ ունին: Այս գաւիթը իր հարաւային կողմը իրարու վրայ երկու խորան ունի: Հիւսանլի է այն քանդակագործ սանդուխը, որ վերի խորանը կ'առաջնորդէ (Արցախ, էջ 374. Տահադ, էջ 124):

Գաւիթին սեմին վրայ կայ՝ «ՈՂ թիւ. Սամելս մեծ յուսով միաբանեցայ, Աստուածածնինս եւ կտու (զարդիւնս) յուսովս Աս-

տուծոյ»: Անոր ներքեւ կայ՝ «Եւ Սերոր եւ Թումա քահանայք եւ եղբարք զմեր հոգոյ արդիւնս տուաք ի սուրբ Աստուածածնիս. հայրս Յովհաննէս եւ միաբանքս ետուն մեզ Բ. պատարագ Թումային ի տանի Անտոնի... թղ. ՉԲ» (Արցախ, էջ 374. Արձագանք, 1888, էջ 132):

Երկրորդ տաճարը կամ վանքը¹⁰ չինուած է ամբողջապէս սրբատաշ քարով, չորս բարձրակառոյց կամարներու վրայ, բայց շատոնց կաթողիկէն արդէն խոնարհած: Շինուած է Գանձասարի ճարտարապետութեամբ եւ ճաշակով: Ունի աւագ խորան մը եւ եօթը խորանիկ, տասնութէկ լուսամուտ, երկու խորհրդարան, երկու դուռ եւ 15·30 մ. երկարութիւն եւ 10·10 մ. լայնութիւն: Հրաշալի է եւ ուշադրաւ բեմին ժողովրդահայեաց ճակատը, որ կազմուած է զոյնզոյն քարերով եւ զարմանազան նրբաքանդակ նաղչերով:

Հարաւային փոքր խորանին դրան վրայ արձանագրուած է՝ «Կամաւն Աստուծոյ եւ Դաւիթ առաջնորդ սուրբ ուխտիս կամակցութեամբ եղբարցս զբեցաք զՏեառնըդառաջ աւրն զամեն եկեղեցիքս, որ Վահրամայ լինի պատարագ, որչափ ի շինութեան է ուխտս»: Հարաւային ներքին պատին վրայ՝ «Անուամբն Աստուծոյ այս դիր է Դաւիթ եւ այլ միաբանացս, որ զբեցաք վասն Յովսէփայ, որ եւ ոսկի ի գին եկեղեցւոյս եւ մեք տուաք Ա. պատարագ ի տանի Քառասնիցն»: Արեւմտեան լուսամտին վերեւ՝ «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա Իւան Շահին եւ ամուսնոյն ՈՂԲ»:

Հարաւային որմին վրայ, արտաքուստ, արեւի ժամացոյցին տակ՝

«Յուսով Աստուծոյ եւ Յովանէս քահանայ կտու զիմ հոգոյ արդիւնս եւ գնեցի յԱրտաւազոյ իւր ամեն որդեացն զայգին եւ ընծայեցի Աստուածածնիս. Յովանէս առաջնորդ եւ միաբանքս կտուն Բ. Ժամ ի տանի Աշխարհամատարան, Ա. Ժամ ինձ եւ Ա. Ժամ իմ մաւրն Չուզին... թղ. ՉԹ» (Արցախ, էջ 378. Արձագանք, 1888, էջ 132):

Այս տաճարներուն արեւելեան կողմը կայ մատուռ մը, որ հետեւեալ արձանագրութիւնն ունի՝ «Ի թուին ՈՈՅ Հայոց) եւ յա-

⁹ Յովսէփ Գնեցիի վեպարանութեան մէջ Սերորեանց զուտտին մէջ Մակարայ վանք կը յիշուի (Աճառեան, Հայ նոր վիպակներ, էջ 51. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 526. Տահեան, Մայր Յուցակ, էջ 89):

¹⁰ Բարխուդարեան կը գրէ՝ «Հարկ է յայտնել, որ Բ. վանքի արեւելեան արտաքին որմի վերայ կայ մի երկար արձանագրութիւն, որի մէջ յիշուած է միայն Մակարայ վանք անուն» (Արցախ, էջ 376):

մենայնի մեղապարտ Յովհաննէս ամեն միաբան եղբարցս կամակցութեամբ եւ ձեռնտուութեամբ զեկեղեցիքս յիմ ծնողացն եւ եղբարցն, որ այժմ ննջեցեալ են շինեցի, Վասակայ, Շուշիկանն, Հասանա(յ) եւ Վաչէի եւ խնդրեմ մեծ յուսով եւ հաւատով եւ զԱստուածածին եւ զԲրիստոսի չարչարանսն բարեխաւս ունիմ, որ յետ իմ սպասաւորեն տեղոյս, զի Չատկին աւրն արասցեն նոցա ժամ...» (Արցախ, էջ 373—376. Արձագանք, 1888, էջ 133) :

Այս արձանագրութիւններէ զատ կան դեռ ուրիշ արձանագրութիւններ, որոնց բովանդակութեան ամփոփումն է՝

1. Վասակ իշխանը Ձիաճիկա կու տայ եւ Վարդանանցին՝ Դաւիթ առաջնորդէն ժամ մը կը ստանայ :
2. Խարդիշիկ եւ Բանուան կը միաբանին Ս. Աստուածածին եւ Դաւիթ առաջնորդէն ժամ կ'առնուն :
3. Ոչոյ թուին նոյն առաջնորդէն Եւազր քահանային Բ. պատարագ կը նշանակուի :
4. Լիպարիտ եւ իր ամուսինը ոսկի կու տան եւ պատարագ մը կ'ընդունին :
5. Պօղոս ալ ոսկի կը յանձնէ եւ Դաւիթէն պատարագ մը կ'առնու :
6. Աշոտ Դ. ժամ կը ստանայ Յովհաննէսէն :

7. «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Վասակա Կուտկանս, որ էտուք զայգին ի վանքս յառաջնորդութեան Յօհանիսի միջնորդութեամբ յԱստուծոյ վկայութեամբ ամեն եղբայրութեանս կամակցութեամբ Աշոտ եւ Գրիգոր եւ Վաչէի եւ իւրեանց մաւրն...» :

8. Սաչատուր քահանան ընծայ տալով Յովհաննէսէն պատարագ կ'ընդունի :

9. Յովհաննէս եւ Տիկին կը միաբանին եւ Յովհաննէս պատարագ մը կը սահմանէ :

10. Շարուհի Գայիանեանց տօնին պատարագ մը կ'առնու :

11. Քրիստափորի տօնին Տէրունականին Յովհաննէսէն պատարագ մը կը տրուի :

12. Միհնաղ իր հոգւոյ արդիւնք կու տայ եւ իրեն պատարագ մը կը յատկացուի :

13. «Այս մեր գիր է Գաւթի (Դաւթի) եւ միաբանացս, որ տուաք Ասիին եւ եկն յուսով եւ միաբանեցա Ս. Աստուածածինս» :

14. «Ես Վաչէ Անբրեղեցի իշխանաց իշխան ետու վեց հարիւր զահեկան ի շինութեան գաւթիս ձեռամբ Գրիգոր վարդապետին եւ յառաջնորդութեան Դաւթի եւ սորա

ետուն զՎազարու տաւնին եւ զԾառազարն զամեն եկեղեցիքս ինձ պատարագելք» :

15. Երիտասարդի մը հոգւոյն կը տրուի իր տօնին առթիւ Դ. ժամ :

16. Խարիբէկ եւ Նանա Վարազայ տօնին՝ պատարագ կը ստանան :

17. Շպունա Խ. դահեկան կու տայ եւ Բ. ժամ իրեն համար կը սահմանուի :

18. Հոգեղեղ իր նուէրին փոխարէն՝ Սուքիասեանց տօնին ժամ մը կ'առնու :

19. Միսիթար եւ Մարագան ընծաներ կը մատուցանեն եւ Բ. պատարագ կը պարտադրեն :

20. Գաղան 20 դահեկան կը նուիրէ եւ Յովհաննէս ու միաբանները Վարազայ տօնին անոր ժամ մը կը գրեն (Արցախ, էջ 373—376. Արձագանք, 1888, էջ 133) :

Այս արձանագրութիւններէն հասու կ'ըլլանք՝ թէ Մակարայ վանքը — որուն եւս Արզու խաթուն իր բարեգործութեան ցոյցը կու տայ — ԺԲ. դարու հիմնարկութիւն է եւ իր առաջնորդներէն եղած են Յովհաննէս եւ Դաւիթ :

Ս. Մակարի վանքը կրնար տրամադրել շատ կալուածներու վրայ. զանոնք ստացած էր նուիրատուութեամբ եւ զնուժով (Արաքս, 1892, էջ 34—39) :

9. ՄԱՆՍՏԵՒԻ ՎԱՆՔԸ

Չորագետի հարաւը, Շինոզ վտակի ափին: Կանգնուած՝ սրբատաշ քարերով: Տանիքին վրայ դրուած է խոյի մը քարեայ գլուխը (Արցախ, էջ 389—390) :

10. ՄՇԱԿԱՎԱՆԻ ԿԱՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Նոր Կողբ գիւղի մօտերը: Չմայելի սարահարթի վրայ շինուած է Ս. Աստուածածնի այս վանքը եւ այն «համակ սրբատաշ սպիտակ, աորոնագոյն եւ երկնագոյն քարերով մի կամարի վերայ» (Արցախ, էջ 385) : Ունի չորս փոքր եւ մէկ աւագ խորան, երկու խորհրդարան, չորս լուսամուտ, մէկ դուռ, 12 մ. երկարութիւն եւ 8 մ. լայնութիւն: Հիմնալիք քանդակներով զարդարուած են բեմի եւ խորհրդարաններու քարերը :

Դրան զիւրաքարի վրայ արձանագրուած է՝ «Ես Ռըստակէս եւ այլ միաբանքս հաստատեցաք ի տարին Բ. ժամ Ա. Արեսալայ, Ա. Ազրզին, ի տաւնի քառասնից, ով խա-

փանէ, մեր մեղացս տէր է առաջի Աստուծոյ» :

Տաճարին արեւմտեան որմին կից է քառակամար եւ զեղեցիկ գաւթիքը, որ կանգնած է երկու միապաղաղ սիւներու եւ վեց կիսասիւներու վրայ եւ ունի երկու խորանիկ, երկու զեղեցկաքանդակ խաչարձան, երեք լուսամուտ, մէկ դուռ, 14.85 մ. երկարութիւն եւ 13 մ. լայնութիւն: Հարաւային խորանին վրայ կը կարդացուի՝ «Տէր Աստուած ողորմեսոյ յԱզատին եւ իւր ծնողացն ամեն» : Նոյն կողմի Խաչարձանին վրայ կայ՝ «Տէր Աստուած ողորմի Աւմ. Տողմիշին, Դաւիթին, Խոյանին» : Իսկ հիւսիսային Խաչարձանին վրայ՝ «Տէր ողորմեսոյ Թաշտին եւ իւր ծնողաց, որ զխաչս կանգնեաց ի թվիս Հայոց ՉԽ» :

Տաճարին որմին վրայ (արտաքուստ) կայ արեւի ժամացոյց մը, որ այս արձանագրութիւնն ունի՝ «Ի թուակ. ԷՃԲ (ՉԲ) եւ Վասակ, Միսիթարունա էջի ետու Աստուածածնիս, Ռըստակէս եւ միաբանքս տվաք Գ. ժամ Աւետեացն տաւնին» :

Մշակավանքի մէջ դեռ ուրիշ արձանագրութիւններ կան: Անոնց համառօտ բովանդակութիւնն է՝

1. «Կամաւն Աստուծոյ եւ Վարդան եւ եղբայրն իմ Ամիրայն միաբանեցաք Աստուածածնիս եւ ի հալալ ընչից մերոց տուաք զսա. հայր Ընստակէս եւ այլ միաբանք հաստատեցին ի տարին...» :

2. «Կամաւն Աստուծոյ եւ հայր Գրիգոր եւ այլ միաբան եղբարքս հաստատեցաք ի տարին Բ. ժամ Խարդիկին ի տաւնի սուրբ Խաչին Զ» :

3. Գաղայ միաբանելով հինգ պատարագ կը ստանայ :

4. Միւրայդեղ երեք պատարագ կ'ընդունի :

5. Գրիգոր եւ Վահրամ հինգ պատարագ կ'առնուն :

6. «Կամաւն Աստուծոյ եւ Ասլան որդի . . շինեցի զմատուռս ի հալալ ինչից իմ. առաջնորդք սուրբ ուխտիս հաստատեցին ի տարին Է. աւր ժամ ի տաւնի սուրբ Աստուածածնին» :

7. Սաչատուր քահանան տուած նպաստներուն համար Գ. ժամ կ'առնու :

8. Երկու ժամ կը հաստատուի իշխանին եւ անոր ամուսինին :

9. Գոհարին եւ Հայրապետին երկու ժամ կը յատկացուի :

10. Պրուխին Ս. Սարգիսի տօնին երկու ժամ կը տրուի :

11. Յունանին մէկ ժամ կը սահմանուի :

12. Վարդեգոյնին եւ Բանուզին մէկական ժամ,

13. Նմանապէս Գերգայ եւ Ոթանկին

14. Իսկ Սարգիսին երկու ժամ

15. եւ Ազիզին ալ երկու ժամ կը յատկացուի :

16. «Կամաւն Աստուծոյ եւ Ասատուրս միաբանեցայ ի սուրբ Աստուածածնիս եւ ետու ստակ եւ ամենայն միաբանքս հաստատեցաք ի տարին Բ. ժամ երկրորդ գալստեան աւրն Ասադոնին առնեն» :

17. Աստուած ողորմեսոյ Ազատին եւ իւր ծնողացն ամէն :

18. Կամաւն Աստուծոյ եւ Սանդուխտ միաբանեցա սուրբ Աստուածածնիս, Առըստակէս եւ այլ միաբանքս ետուն ա. աւր ժամ ի տաւնի Սանդխտոյ...» :

19. Աթարակ եւ իր ամուսինն երկու ժամ կ'ընդունին :

Այսպէս արձանագրութիւններէն պայծառ կ'երեւայ թէ այս վանքը բաւականէն աւելի սիրուած սրբավայր եղած է (Արցախ, էջ 385—386. Արձագանք, 1888, էջ 160—161) :

«Վանքիս շուրջն լի է գերեզմանաքարերով. այս տեղ կայ եւ գիւղատեղի՝ որ կոչուում է վանք: Անյայտ են միաբանից խուցերի տեղերն» (Արցախ, էջ 386) :

11. Ս. ՊԵՏՐՈՍԻ ԿԱՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ
տե՛ս
ՋՈՒՆՏԱԿ ՎԱՆՔԸ

12. ՊՂՆՁԱԷԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Վարդան Պատմագիրը կը հաղորդէ՝ «Եղեւ շարժ ահագին (ՈԿԸ թուին) եւ փրաւ պաճուճագարդ եկեղեցին որ ի Մշակավանս, ի մենաստանն, Յունուարի ի ժամ Տաշու եւ զ. պատարագոյ ընդ մեծ զեմանն նուիրեցան» (Պատմ., էջ 142. հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 528) :

Մաթոս զիւղատեղին՝ «կայ մի մենաստան սրբատաշ քարով, բաղկանում է երկու մատուածեւ տաճարից եւ մի գաւթից...» : Արձանագրութիւնից երեւում է որ այդ եկե-

ղեցին կոչուել է Պղնձահանաց Աստուածածին» (Արձագանք, 1888, էջ 101):

Եկեղեցւոյ ճակատին վրայ գրուած է «Կաման Աստուծոյ եւ Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվ. ՈՂ. յիշխանութեան Աւագին՝ ողորմութեամբ Պղնձահանաց Աստուածածնին եւ ի առաջնորդութեան Պետրէի եւ տէր Համազասպայ, որք երկրպագէք յիշեցէք յաղաթս ձեր զՄխիթարն... եւ զՅորդանան...» (Արձագանք, 1888, էջ 363-ճմմտ. եւ Արցախ, էջ 363—364, որ աւելի լաւ եւ ճոխ ընթերցուած եւ ուրիշ արձանագրութիւններ ալ ունի): Հետեւաբար վանքին հիմնադիրն է Աւագի օրով (ՈՂ—ՈՂԶ թուականներուն) Յորդանան:

13. ՋՈ(Ի)ԵՏԱԿ ՎԱՆՔԵՐԸ (Ս. ԳՐԻԳՈՐԻ ԵՒ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԵՐԸ)

Կը գտնուին Պօղոս քիլիսա զիւղի արեւմտեան կողմ երկու առուակներու մէջ ինկած անտառապատ հովիտի մը գոգը եւ շինուած են իրարու մերձ:

Արեւելեան վանքը, որ արձանագրութիւններու համաձայն Ս. Գրիգոր կոչուած է, կառուցուած է չորս կամարներու վրայ, որոնց զլիւսն բազմած է կաթուղիկէն: Ունի աւագ խորան մը, չորս փոքր խորան, ութ լուսամուտ, երկու խորհրդարան, երկու ճգնարան, 9-78 մ. երկարութիւն եւ 7-57 մ. լայնութիւն: Երկու վերին եւ փոքր խորաններն եւ ասոնց ժողովրդահասցեաց երեսները զարդարուած են գեղեցիկաքանդակ խաչերով: Այժմ կաթուղիկէն ամբողջապէս խոնարճած:

Վանքին հարաւային կողմը (արտաքուստ) արձանագրուած է՝ «Կաման Աստուծոյ եւ Տալիթայս միաբանեցայ սուրբ Գրիգորիս, միաբանքս ետուն ա. պատարագ ի տանի Ծառագարդին, կատարելքն աւրճնին յԱստուծոյ»:

Աւագ խորանին հիւսիսային ներքին կողմը կայ՝ «Այս իմ զիւր է Բէկիս եւ Բարինիս, որ գնեցաք զաջոյ խորանս, հանապաղ մեզ պատարագ, կատարելք գրոյս աւրճնին յԱստուծոյ»:

Երկրորդ վանքը արեւմտեան կողմն է եւ կոչուած Ս. Պետրոս, մինչ եկեղեցին Ս. Աստուածածնի նուիրուած: Տաճարն ունի երկու փոքր եւ աւագ խորան մը, չորս լուսամուտ, գուռ մը եւ 8-62 մ. երկարութիւն եւ 6-40 մ. լայնութիւն:

Դրան ճակատակալ քարին վրայ գրուած է՝ «ՈՄԱ. Հայոց... ամիրութեան Լաւայի ի տէրութեան... խանին եւ Հայրապետ առաջնորդ ուխտիս, որ կոչի Պետրոսի վանս, շինեցի զսուրբ Աստուածածնին եւ յուսով կարգեցի զճարպալոյց(ի)ն Բ. խորանն ինձ պատարագ առնել եւ Ա. իմ եղբարն Շմաւոնին¹¹»:

Հիւսիսային փոքր խորանին դրան վրայ՝ «Ի թվ. ՈՄԶ. եւ Մայրացեալս շինեցի զխորանս ի հալալ արդեանց իմոց եւ առաջնորդ սորա ետուն ի տարուին... ժամ Տեառնընդառաջին»:

Հարաւային փոքր խորանին դրան վրայ՝ «Յայսմ խորանի ա. ժամ ի տանի սուրբ Սարգսին՝ Սարգսին արացեան, զի նորա արգեամբք շինեցաւ խորանս...¹²»:

«Վանքերիս շուրջն լի է գերեզմաններով: Միաբանից սենեակներն շինուած են եղել գետնափոր, վիճափոր եւ փայտեայ: Իսկ շրջապարիսպի հետքերն անգամ անկարելի եղաւ գտնել» (Արցախ, էջ 361—363-ճմմտ. եւ Մշակ, 1911, թ. 181):

14. ՍԱՄՍՈՆԻ ՎԱՆՔԸ

Խնձորկուտի ձորի մէջ: Տափարակ վայրի մը վրայ: Փոքր է «Վանքս՝ որ ներսեց խաչածե է, ունի կաթուղիկէ, աւերակ խուցեր եւ հանգստարան» (Արցախ, էջ 381):

(Վերջ):

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

¹¹ Այս արձանագրութիւնը Գալիկեան կը կարգայ՝ «Ի հայրապետութեան սուրբ ուխտիս որ կոչի Պետրոսի վանս, շինեցի զսուրբ Աստուածածնին եկեղեցիս եւ կարգեցի զճարպալոյցն Բ. խորանն ինձ... ա. իմ եղբարն Շմաւոնին. դամեն եկեղեցիս մեծ աղվան» (Արձագանք, 1888, էջ 101): Արդէն Ջալալեանի, Գալիկեանի եւ Բարիսուգարեանի արձանագրութիւններու ընթերցումներու մէջ եւ այն ստէպ ըստական մեծ տարբերակներ կան:

¹² Գալիկեան հետեւեալ արձանագրութիւններն ալ ունի՝ «Յատուր տանի Վարապայ խաչի Ա. ժամ Մխիթարայ առնեն, ով խափանէ զատապարտեցի յԱստուծոյ»: — «Կաման Աստուծոյ եւ Մրուան միաբանեցայ Ս. Աստուածածնին եւ ետուն ընծայ եւ Յորդանան եւ ինձ Բ. ժամ պատարագ ի տանի սորոյ իսախին Ա. ինձ եւ Ա. Լեբանցին անխափան» (Արձագանք, 1888, էջ 101):

Այսքան է այս վանքերու մասին մեր ծանօթութիւնը: Յորդանան՝ առաջնորդ ըլլալու է: Բարիսուգարեանի արձանագրութեան մը ընթերցումին համեմատ՝ ուրիշ առաջնորդ մըն է՝ Հայրապետ (ճմմտ. վերջ):

ԹԵՂԵՆՍ Վ. ԿՈՂՈՆԻՍՅԻ, ԹՈՒՍԸԹԵՑԻ ԵՒ ԹԵՂԵՆՍ ԵՐԷՑ ՍԵՐՇՍԵՑՅԻ ՏԸՂԸՍԵՑՆԵՐ

1.

ԹԵՂԵՆՍ Վ. ԿՈՂՈՆԻՍՅԻ (ԹՈՒՍԸԹԵՑԻ) ԸՂԸԿԵՐՏ ՄԸՂԸՍԵՐԸ Վ. ԳԵՐՋԵՆԵՑՅԻՈՑ ՏԸՂԸՍԵՑ (ԺԶ. ԳԵՐ)

Կողոնիս ուշ ժամանակի Շապին Գարահիսարն է, այսպէս կոչուած պաղլեղի հանքէն, որ կը գտնուէր քաղաքին մերձաւորութեան (ճմմտ. Պոնտական ուսումնասիրութիւնք, էջ 301 եւ շար.): Քաղաքս ունեցած է ի հնուց հայ բնակչութիւն: Այս տեղ ծնած է Թաղէոս, այս պատճառով ալ կրած է իրրեւ մականուն Կողոնիացի: Իր ծնողաց անունները ծանօթ չեն: Մնուողը կարելի է դնել իր 1500ին: Իր կեանքէն ունինք հետեւեալ գծերը:

1521ին գտնուած է Երզնկա եւ կազմած Յայսմաուրք մը: Երբ Մաղաքիս Վ. Դերջանեցի կը վերադառնայ հայրենիք եւ կը սկսի դասախօսել, Թաղէոս կ'աշակերտի իրեն: Մաղաքիս կը յիշէ 1531ին իր աշակերտներու թուին մէջ «տէր Թաղէոսը», առանց մականունի:

1534 տարւոյն կը գրէ. «Ես Թաթէոս վարդապետս Կղնցի (կարգա՝ Կողոնիացի) ի թվ. 22Գ. գնացի յԵրուսաղէմ. եւ ի Հալապ գնեցի զԱրարածոց գիրքս յիշատակ ինձ եւ իմոցն յիշողացն» (Աճառեան, Յուց. Թաւրիզ, էջ 26բ):

1548ին «Թաղէոս Վ. Կողնցի» (Կողոնիացի) կը կազմէ Աւետարան մը (գրուած 1471). «Ի թվին 2ԽԷ. յորժամ Կարմիր կտակն այրեց ի յԵրզնկէն մինչեւ ի Խնուզ եւ շատ գաւառ այրեցաւ» (Ձեռ. Լազարեան ձեմարանի, թ. 26):

1562ին Ղազար գրիչ կ'օրինակէ յԵրզնկա Մաշտոց մը, ուր կը խնդրէ յիշել «եւ զուսուցիչն իմ զԹաթէոս բարունի վարդապետն, զի բազում աշխատանս կրեաց ընդ իս եւ ես անմիտս ոչ կարացի ուսանել լաւ» (Կարին, Արձնեան Վարժարան, թ. 36. Յուց. Քօսեան, անտիպ):

Այս Կողոնիացին է, որ նուիրած է իր ուսուցչին՝ Մաղաքիս Դերջանեցւոյ «Անձինք» մը, որ ընծայական մըն է, ներկայացուած հաւանօրէն վարդապետական աստի-

ճանի ստացումին նախօրեակին, իր 1532ին: Ասկէ վերջն է, որ Թաղէոս վարդապետ ուխտաբանաց կ'ըլլայ Երուսաղէմ: Վերադարձին թէ ո՞ր հաստատուեցաւ եւ իր դասարանը ո՞ր բացաւ, չէ վկայուած: Ան կենդանի էր 1562ին. Ղազար Երզնկացի, իր աշակերտը, որ իրրեւ սարկաւազ ձեռնարկած էր Մաշտոցի օրինակութեան, աւարտած է զայն ի քահանայութեան Երզնկա: Ասկէ չենք կրնար հետեւեցնել, սակայն, թէ իր ուսումը առ ոտս Թաղէոս բարունոյ նոյնպէս Երզնկա առած է:

Այս շրջանին կը յիշուի ձեռագիր Տաղարաններու մէջ Թաղէոս Վ. Եւզոկիացի կամ Թոխաթեցի մըն ալ, որ երգած է զանազան տաղեր, այցելած է Երուսաղէմ եւ երգած սուրբ Տեղեաց գովքը: Տաղարանները իր տաղերու խորագրին մէջ կ'անուանեն զինքը Թաթոս, Թաղէոս Թոխաթեցի մղտեսի, Թաղէոս սարկաւազ, մաստեսի, նաեւ Թաղէոս վարդապետ: Հ. Մ. Պոտուրեան, որ առաջին անգամ քննութեան առաւ տաղասացս եւ հրատարակեց անոր 8 անտիպ տաղերը, նկատի առնելով, որ այդ տաղերը կը տեսնուին արդէն 1604ին գրուած տաղարանի մէջ, կը գրէ անոր ժամանակի մասին. «Կրնամ վստահութեամբ ըսել, թէ Թոխաթեցի Թաղէոսը ապրած է ԺԶ. դարու կէսէն վերջ, 1550ի առնները ծնած. եւ կամ այն է՝ որ մտերիմ ընկերն եղած է Ստեփանոս Թոխաթեցի Տաղասացին՝ եւ կամ ուսուցիչը» (ԲԶՄ. 273): Բայց չի բերեր որ եւ է վկայութիւն այսպիսի եզրակացութեան յանգելու համար:

Ինձ անծանօթ է ԺԶ. դարուն ծաղկած Թաղէոս Վ. Թոխաթեցի: Այս անունով միակ վարդապետը, որ կը յիշուի այս դարուն՝ Թաղէոս Վ. Կողոնիացին է: Կայ Տարօնի Գլակայ վանքը Թաղէոս եպիսկոպոս մը, գովուած իրրեւ առաջնորդ վանքին, բայց չէ վկայուած, թէ ան դասասաց վարդապետ եղած ըլլայ:

Պարզ զուգադիպութեան արդիւնք պէտք է համարել, որ Կողոնիացի եւ Թոխաթեցի Թաղէոսները թէ վարդապետ են, թէ տաղասաց եւ թէ Երուսաղէմի այցելու: Թոխաթեցի վարդապետ բացի տաղերէ որ եւ է հետք ձգած չէ պատմութեան մէջ եւ ոչ ալ ԺԶ. դարու յիշատակագիրները խօսք ըրած իր մասին, գոնէ որքան ինձ ծանօթ է: Այս պատճառով կը միտիմ նոյնացնել երկու Թաղէոսները այն մտածութեամբ թէ ան «Կողո-